

## ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԱՔԵՂՅԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

### Ա. Զ. ԱԴԻԿԱՆՅԱՆ

XIX դարի կեսերին ավարտվում է արևելահայերենի և արևմտահայերենի, որպես անկախ գրական լեզուների, կազմավորման ընթացքը, որոնցից առաջինը ձևավորվում է Արարատյան, իսկ երկրորդը՝ Պոլսի բարբառի հիմքի վրա: Արևմտահայերենի և արևելահայերենի քերականական համակարգերի առաջին լուրջ ուսումնասիրությունները կատարել են Ա. Այտրեյանը և Ստ. Պալասանյանը, որոնք իրենց քերականությունների մեջ, ի թիվս այլ հարցերի, քննել են նաև խոսքի մասերը և նրաց դրսևորումները հայերենում:

Հայտնի է, որ հայ քերականագիտությունը ձևավորվում է մ. թ. ա. II դարի հույն քերական Դիոնիսիոս Քրակացու «Արուեստ քերականութեան» գրքի թարգմանությամբ (V դար): Այս աշխատության մեջ նշվում է, որ խոսքի մասերը («մասունք բանի») ութն են՝ անուն, բայ, ընդունելություն (դերբայ), հոդ, դերանուն, նախադրություն, մակբայ, շաղկապ<sup>1</sup>:

Քրակացու սահմանած խոսքի մասերի այս համակարգը որոշորովում է հայ քերականների կողմից ու առանձին փոփոխություններով գոյատևում մինչև XIX դարի վերջերը: Այսպես՝ Ա. Այտրեյանը խոսքի մասերը դասակարգում է հետևյալ կերպ. «բառ կամ մասն բանի 8 տեսակ է, 4-ը՝ փոփոխական և 4-ն՝ անփոփոխ»<sup>2</sup>, իսկ Ստ. Պալասանյանն ընդունում է տասը խոսքի մաս՝ գոյական, ածական, բայ, մակբայ, դերանուն, թվական, դերբայ, նախադրություն, շաղկապ, ձայնարկություն<sup>3</sup>:

#### Փոփոխականք.

1. Անուն
2. Դերանուն
3. Բայ
4. Դերբայ

#### Անփոփոխք.

5. Մակբայ
6. Նախադրություն
7. Շաղկապ
8. Միջարկություն

Սակայն XX դարի սկզբին հայ քերականագիտական միտքը նոր ընթացք է ստանում ակադեմիոր լեզվաբան-քերականագետ Մ. Արեղյանի ասպարեզ գալով: Արեղյանի աշխատությունները արժեքավորվում են այն բանով, որ նա իր ժամանակի բարձրագույն մակարդակին է հասցնում հայ քերականագիտական միտքը, ձգտում է ստեղծել այնպիսի քերականական համակարգ, որն առավելագույնս համապատասխանի հայերենի ոգուն ու էությունը և արտացոլի կենդանի լեզվում գործող օրենքներն ու օրինաչափությունները:

Հայ քերականագիտության մեջ անկրկնելի արժեք ունեն Մ. Արեղյանի «Աշխարհաբարի քերականութիւն» (1906 թ.), «Աշխարհաբարի շարահիւութիւն» (1912 թ.), «Հայոց լեզվի տեսութիւն» (1931 թ.) աշխատությունները, որոնցում ամփոփված են Մ. Արեղյանի քերականագիտական ինքնատիպ հայացքներն ու վերլուծությունները<sup>4</sup>:

Այս ինքնատիպությունը ցայտուն կերպով հանդես է գալիս նաև «խոսքի մաս» և «նախադասության անդամ» ըմբռնումների մեկնաբանությունների հարցում: Հենց սկզբից նշենք, որ Մ. Արեղյանի ելակետային դրույթն այս հարցում այն է, որ նա ձգտում է միահյուսել խոսքի մաս և նախադասության անդամ հասկացությունները և այսպիսով բուն լեզվում գոյություն

<sup>1</sup> Տե՛ս Н. Г. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 12:

<sup>2</sup> Ա. Այտրեյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 4:

<sup>3</sup> Ստ. Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի, Քիֆլիս, 1906, էջ 82:

<sup>4</sup> Այս աշխատություններից վերջին երկուսը հեղինակի մահից հետո «Հայոց լեզվի տեսութիւն» ընդհանուր վերնագրով վերահրատարակվել են 1965 և 1974 թթ.:

ունեցող միասնական համակարգը ներկայացնել նաև լեզվի քերականական ուսումնասիրության մեջ: Իսկ ինչքանով է նրան հաղողվել այս միահյուսումը կամ նույնացումը դարձնել հակասություններից զերծ, ամբողջական ու կուռ համակարգ: Այս հարցին կարելի է պատասխանել Մ. Արեղյանի՝ խոսքի մասերի ուսմունքը ներկայացնելուց ու վերլուծելուց հետո միայն:

Նախ՝ ի՞նչ է հասկանում Արեղյանը խոսք ասելով, և ո՞րն է խոսքի մասերի հարցում արեղյանական ըմբռնումը:

Խոսք ասելով Արեղյանը հասկանում է նախադասություն առհասարակ և տալիս հետևյալ ձևակերպումը. «Խոսքը կամ նախադասությունը բառերով արտահայտված մտածողություն է»<sup>5</sup>:

Այսինքն՝ մարդկային մտքերն արտահայտվում են բառերի միջոցով: Բառերը մասնակցում են նախադասությունների (խոսքերի) կազմմանը: Խոսքում ամեն բառ ունի մի ինքնուրույն նշանակություն և ըրտ ալնմ մի պաշտոն է կատարում խոսքի նկատմամբ» (էջ 294): Բայց բառերը տարբեր դեր են կատարում խոսքի արտահայտման մեջ, և դա կախված է ներուսնց նշանակություններից: Այստեղից էլ պահանջ անհրաժեշտություն է առաջանում բառերը դասակարգել ըստ նրանց արտահայտած ընդհանուր նշանակությունների: Դա է հենց Մ. Արեղյանի՝ խոսքի մասերի ուսմունքի հիմնաքարը:

Այժմ տեսնենք, թե ինչպե՞ս է կատարվում բառերի իմաստային (ըստ նշանակությունների) դասակարգումը: Նշելով, որ բառերի ամենամեծ մասը նշանակում են գաղափարներ, և միայն մի փոքր խումբ բառեր ցույց են տալիս խոսողի զգացմունքը, երբեմն և կամքը, Մ. Արեղյանը բառերը բաժանում է 2 խմբի:

ա) բառեր, որոնք ցույց են տալիս գաղափար, որոնցով մենք խոսում ենք (էջ 104),

բ) զգացմունք արտահայտող բառեր, որոնք խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարելով՝ դուրս են մնում խոսքից: Դրանք ձայնարկություններ կամ միջարկություններ կոչվող բառեր են (էջ 104):

Մենք հաղորդակցվում ենք գաղափար ցույց տվող բառերով: Իսկ այդ բառերը խոսքի մեջ մատնանշում են առարկա, հատկանիշ կամ գործողություն՝ արտահայտելով նյութական նշանակություն, կամ ունենում են ձևական, այսինքն՝ քերականական նշանակություն: Ուստի և Արեղյանը գաղափար նշանակող բառերն իրենց նշանակությամբ բաժանում է երկու խմբի.

ա) բառեր, որոնք ունեն նյութական, մեծ մասամբ նաև ձևական նշանակություն, զրանցից կազմվում է խոսքը, ուստի կոչվում են խոսքի մասեր (բայ, գոյական, ածական, մակբայ) (էջ 105),

բ) բառեր, որոնք ունեն միայն ձևական նշանակություն և խոսքի մեջ ինքնուրույն մաս չեն կազմում, ուստի և կոչվում են խոսքի մասնիկներ (կապ, շաղկապ) (էջ 105):

Ստացվում է, որ միայն նյութական արժեք ունեցող բառերը կարող են հանդես գալ առանձին խոսքի մասերի խմբում: Իսկ այդ բառերն են՝ բայը, գոյականը, ածականը և մակբայը: Եվ բառերի այս տեսակներն են մասնակցում խոսքերի կազմավորմանը, քանի որ միայն այդ բառերը կարող են նախադասության որևէ անդամի դերում հանդես գալ: Այսինքն՝ բառերի նշանակությունից է բխում բառերի ունեցած պաշտոնը նախադասության մեջ: Հետևաբար, Մ. Արեղյանը խոսքի մաս ասելով՝ հասկանում է բառերի այն խմբերը, որոնք նախադասության մեջ կարող են հանդես գալ առանձին պաշտոններում: Կարելի է ասել, որ Մ. Արեղյանը կատարում է խոսքի մասերի կրկնական դասակարգում՝ խոսքի մասեր կամ բառերի տեսակներ ըստ նշանակության և այդ նշանակությունից բխող խոսքի մասեր ըստ պաշտոնի: Նյութական նշանակության բառերը (խոսքի մասերը)՝ բայը, գոյականը, ածականը, մակբայը, նախադասության մեջ հանդես են գալիս բայ-ստորոգյալի, ենթակալի, խնդրի, վերագրի, պարագայի պաշտոններով: Խոսքի մաս ասելով Արեղյանը նկատի ունի և՛ «խոսքի մասերը» և՛ «նախադասության անդամները»: Ասել, թե Արեղյանն ամենեկին շի տարբերակել խոսքի մասերը նախադասության անդամներից, սխալ կլինի: Արեղյանն այդ տարբերությունը շատ լավ գիտակցում է: Եվ այդ պատճառով էլ նա բառերը բառագիտության բաժնում քննում է ըստ իրենց ունեցած նշանակությունների կամ ըստ իրենց արտահայտած իմաստների՝ բառերի մեջ տեսնելով առարկայնության, հատկանշական, գործողական իմաստները, իսկ շարահյուսության բաժնում քննում է բառերի նշանակությունից (իմաստից) բխող նախադասության անդամները, այդ նույն բառերի կատարած պաշտոնները խոսքի մեջ (նախադասության մեջ): Պրոֆեսոր Հ. Բարսեղյանը իր «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» գրքում գրում է. «Մ. Արեղյանի դասակարգման մեջ բառերի տեսակը ավելի մեծ խմբից և երկրորդական տեսակից որոշողն այն ընդհանուր նշանակությունն է, որը նախադասության մեջ ունի գործառական, տարբերակված և այլևս շտրոհվող հատկանիշ»<sup>6</sup>:

<sup>5</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1974, էջ 293: Այսուհետև շարադրանքում կտրվի միայն էջահամարը:

<sup>6</sup> Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980, էջ 186:

Միանգամայն համաձայն լինելով այս տեսակետին՝ տենենք, թե Մ. Արեղյանն ինչպես է դասակարգում նյութական նշանակություն ունեցող բառերը:

1. «Բառեր, որոնք ցույց են տալիս հատկանիշ, զեմք, միաժամանակ և ստորոգում, այսինքն՝ հատկանիշի վերագրումը զեմքին: Այս բառերը կազմում են մի խոսք և կոչվում են բայ»:

2. Բառեր, որոնք ցույց են տալիս ինքնակա գոյություն ունեցող կամ իրրև այնպիսին մը-տածված առարկաներ և կոչվում են գոյական, ինչպես՝ մարդ, ձի, ծառ:

3. Բառեր, որոնք ցույց են տալիս ոչ-ինքնակա հատկանիշներ, որ մտածվում են՝

ա) իրրև առարկայից անբաժան, առարկայի բնության մեջ մշտապես կամ ժամանակավորապես գտնված մի որպիսություն, գործողություն, դրույթուն և այլն և կոչվում են ածական, օրինակ՝ բարի (մարդ), վազող (ձի), ծաղկած (ծառ),

բ) իրրև առարկայի հատկանիշից անբաժան հատկանիշ կամ իրրև հատկանիշի հատկանիշ (պարագա) և կոչվում են մակբայ, օրինակ՝ խիստ բարի (մարդ), արագ վազող (ձի)» (էջ 106):

Այս մեջբերումից միանգամայն պարզ է, որ Արեղյանն, ի տարբերություն իր նախորդների, ընդունում է խոսքի մասերի շորս «ևսակ» բայ, գոյական, ածական և մակբայ:

Այժմ դրանց մասին առանձին-առանձին:

Բայն իր արտահայտած առանձնահատկությունների (զեմք, թիվ, ստորոգում՝ հատկանիշի վերագրումը զեմքին) շնորհիվ Արեղյանն առանձնացնում է մյուս բոլոր խոսքի մասերից այն հիմունքով, որ այդ խոսքի մասը կարող է խոսք կամ նախադասություն կազմել, ուստի և բայ են կոչվում այն բառերը, որոնք հենց «մենակ» խոսք են կազմում (հասկանալի է, որ նկատի են առնվում բայի դիմավոր ձևերը): Ուրեմն՝ բայը փաստորեն շարահյուսական առանձին կարգ է:

Գոյականի խոսքիմասային իմաստն այն է, որ ցույց է տալիս «ինքնակա գոյություն ունեցող կամ իրրև այդպիսին գիտակցված առարկաներ»: Այսինքն՝ իր նախորդների նման, գոյական խոսքի մասի մեջ Արեղյանը խմբավորում է այն բառերը, որոնք ունեն առարկայական իմաստ:

Ածականն ու մակբայը Արեղյանը քննում է միասին՝ անվանելով մակարդական (վերագրական) բառեր: Նրա կարծիքով ածականը և մակբայը հատկանիշ են ցույց տալիս, միայն թե ածականը «առարկայից անբաժան» հատկանիշ է ցույց տալիս, իսկ մակբայը՝ «հատկանիշի հատկանիշ (պարագա)»: Մ. Արեղյանը, այսուհանդերձ, մակբայը, իրրև առանձին խոսքի մաս, ի վերջո առանձնացնում է ածականից, գտնելով, որ հայերենում մակբայները սակավաթիվ են: «Մեր մակբայներն ամենամեծ մասամբ դրույթամբ միայն մակբայ են: Երբ ածականների ցույց տված հատկանիշը վերաբերում է ոչ թե առարկայի, այլ առարկայի հատկանիշին, այն ժամանակ ածականներն առնվում են իրրև մակբայ» (էջ 106): Ըստ Արեղյանի, մակբայների արտահայտած նշանակությունը որոշակի է դառնում շարահյուսական համակարգում՝ խոսքի (նախադասության) մեջ: «Հայերենում մակբայն, ուրեմն, ածականի առանձին կիրառությունն է շարահյուսական կապակցության մեջ» (էջ 106): Մակբայի և ածականի՝ տարբեր խոսքի մասերի պատկանե՛ն ավելի ցայտուն արտահայտվում է խոսքի մեջ: Շարահյուսական համակարգում այդ բառերի կատարած պաշտոնները մեզ հուշում են, որ դրանք տարբեր նշանակությունների ունեն: Ածականը խոսքի մեջ գրվում է գոյական անվան վրա, իրրև վերագիր, իսկ մակբայը՝ «մի ածականի ու բայի վրա»:

Գոյականի, ածականի, մակբայի խմբերում ընդգրկված բառերի առարկայնությունը, առարկայի հատկանիշ և հատկանիշի հատկանիշ ցույց տալը, անփոփոխ և հաստատուն են խոսքի (նախադասության) մեջ՝ շարահյուսական համակարգում: Հենց այդ նշանակություններից են բխում այդ բառերի շարահյուսական կիրառությունները:

Սակայն խոսքի մասերի արեղյանական դասակարգումը սրանով չի սահմանափակվում, այլ գոյականը, ածականը, մակբայը դասակարգվում են երկրորդական խմբերի: «Գոյականները, ածականները, մակբայները իրենց կողմից ըստ իրենց նշանակության, բաժանվում են երկու երկրորդական տեսակների՝ անուն և դերանուն» (էջ 106): Այս կապակցությամբ պետք է նշել հետևյալը. եթե նախորդ քերականները անունը դիտում էին որպես լայն հասկացություն, և գոյականը, ածականը, թվականը, դերանունն ընդգրկում անուն հասկացության մեջ՝ գոյական անուն, ածական անուն, թվական անուն, դերանուն, ապա Արեղյանը անուն հասկացությունը կիրառում է նեղ իմաստով: «Անունները,—գրում է նա,—ունին անփոփոխ, հաստատուն նշանակություն, իսկ դերանունները հաստատուն նշանակություն չունին, այլ ամեն անգամ նայելով, թե ինչ անվան տեղ են գրված կամ ինչ անվան են ակնարկում՝ նրա նշանակությունն էլ ստանում են» (էջ 106): Արեղյանի կարծիքով դերանունների մեջ առկա է գոյականական, ածականական և մակբայական իմաստ (ես, դու, նա, սա, դա, այդ, այն, սույն, դույն, իմ, քո, աստ, անդ, ուր): Ուստի և դրանք դասակարգվում են հենց այդ խոսքի մասերի մեջ որպես դրանց առանձին տեսակ՝ գոյական դերանուն, ածական դերանուն, մակբայ դերանուն: Պետք է

նշել, որ վերջին շրջանի քերականություններում դերանունների այսպիսի ըմբռնումը և այն անվանումների գործածությունը դառնում է սովորական ու ընդունելի: Օրինակ՝ ակադեմիկոս Գ. Բ. Զահուկյանը Արեղյանի նման դերանունների մեջ տեսնում է առարկայնություն, հատկանշության, հատկանիշի հատկանիշ ցույց տալու հատկություններ և դրանք համարում խոսքի առանձին մասեր՝ գոյական դերանուն, ածական դերանուն, քանակական դերանուն, մակբայական դերանուն...<sup>7</sup>:

Առաջնորդվելով իմաստային սկզբունքով՝ Մ. Արեղյանը թվականները և դերանունները ևս միավորում է գոյականի, ածականի և մակբայի խմբերում և այսպիսով յուրաքանչյուր խոսքի մասի համար ընտրում է շրջա տեսակ՝ «անուն (նեղ մտքով), թվական, դերբայ և դերանուն»:

Ըստ այդմ՝ գոյականները, ածականները և մակբայները բաժանում է հետևյալ ենթախմբերի՝

ա. գոյականները լինում են՝

1. Անուն գոյական կամ գոյական անուն (տուն, վայտ, լավություն),
2. Թվական գոյական կամ գոյական թվական (տասնյակ, հիսնյակ),
3. դերբայ գոյական կամ գոյական դերբայ կամ բայանուն, սովորաբար՝ անորոշ դերբայ (գնալ, ասել, գրել),

4. դերանուն գոյական կամ գոյական դերանուն (ես, դու, նա, սա, դա):

բ. Ածականները լինում են՝

1. անուն ածական կամ ածական անուն (լավ, վատ),
2. Թվական ածական կամ ածական թվական (մի, երկու, առաջին),
3. դերբայ ածական կամ ածականական դերբայ (գրած, գրելու, գրող),
4. դերանուն ածական կամ ածական դերանուն (այս, այդ, սույն, դույն, իմ, քո, մեր, ձեր):

գ. Մակբայները լինում են՝

1. անվանական մակբայ (ազատորեն, քաջաբար),
2. Թվական մակբայ (երկիցս, երիցս),
3. դերբայական մակբայ կամ բայական մակբայ (գալիս, գրելիս),
4. դերանվանական մակբայ (աստ, անդ, ուր)» (107):

Ինչպես տեսնում ենք, Մ. Արեղյանը դերանունը, թվականը, դերբայը առանձին խոսքի մաս չի դիտում և տեղաբաշխում է գոյականների, ածականների և մակբայների մեջ: Այս դասակարգման մեջ դերանունների հարցը պարզ է. առարկայական իմաստ արտահայտող դերանունները դասակարգվում են դոյականների, հատկանշային իմաստ արտահայտողները՝ ածականների, իսկ հատկանիշի հատկանիշ արտահայտողները՝ մակբայների մեջ:

Իրականում նույնն է նաև թվականների տեղաբաշխման սկզբունքը: Թվականն ունենալով «թվի և համարքի» գաղափարը՝ խմբավորվում է գոյականների, ածականների և մակբայների մեջ ըստ առարկայնության (տասնյակ, հիսնյակ, հարյուրյակ), հատկանշության (մի, երկու, առաջին, երկրորդ) և հատկանշի հատկանշության (երկիցս, երիցս):

Այսպիսով՝ Մ. Արեղյանը թվականը խմբավորում է «գոյական թվական», «ածական թվական», «մակբայ թվական» խմբերում:

Ինչ վերաբերում է դերբայներին, պետք է ասել, որ Արեղյանը հայերենի դերբայները ևս դերանունների և թվականների նման բաժանում է գոյականի, ածականի և մակբայի խմբերի վրա՝ որպես այդ խոսքի մասերի տեսակներ՝ գոյական դերբայ, ածական դերբայ, մակբայ դերբայ: Նա գոյական խոսքի մասի առանձին տեսակ է դիտում անորոշ դերբայը (գնալ, ասել, գրել), ածական խոսքի մասի մի տեսակ՝ հարակատար, ապառնի, ենթակայական դերբայները (գրած, գրելու, գրող), մակբայ խոսքի մասի մի տեսակ՝ անկատար դերբայի (գալիս, գրելիս) ձևերը:

Փաստորեն նա անկատարի -ում ձևը և վաղակատար դերբայը իրավացիորեն խոսքիմասային միավորներ չի համարում: Այս ձևերը քննվում են բայի ժամանակային ձևերի բաժնում: Դրանք ժանդակ բայի հետ կազմում են բաղադրյալ ժամանակաձևերը:

Այսպիսով՝ Արեղյանն ընդունում է շրջա խոսքի մաս՝ գոյական, ածական, մակբայ, բայ: Սակայն Արեղյանի առաջարած խոսքիմասային համակարգում բայի, գոյականի, ածականի և մակբայի կողքին առանձնացված են բառեր, որոնք կոչվում են «խոսքի մասնիկներ»: Խոսքի մասնիկները այն բառերի խումբն է, որ նյութական նշանակությունից դուրս է, ունի միայն ձևական (քերականական) նշանակություն: Ունենալով ձևական նշանակություն, նրանք ևս նյութական նշանակություն արտահայտող բառերի նման մասնակցում են խոսքերի (նախադասությունների) կազմավորմանը: «Խոսքի մասնիկներ» անունը կրող բառախմբի մեջ մտցված

<sup>7</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

են հետևյալ բառերը՝ կապակցական բառեր (կապ, շաղկապ), եղանակական բառեր կամ մասնիկներ (թերևս, գուցե, ապաքին, արդյոք, գոնև), բացասական մասնիկներ («ոչ», «չը»), պատասխանական բառերը («այո», «ոչ»)։ «Կապակցական բառերի» մեջ հնդինակը մտցնում է կապերը (նախադրություն և հետադրություն), ստորադասական և համադասական շաղկապները։ Դրանք միմյանց հետ են կապում նախադասության անդամները և նախադասությունները։ Այդ երեքն առանձին-առանձին բնորոշվում են հետևյալ կերպ. «Կապերը խոսքի մեջ ստորադաս գոյականը իրրե լրացում (խնդիր) կապում են գերադաս բառի հետ, ստորադասական շաղկապները ստորադաս խոսքերը կապում են գերադաս խոսքի հետ (թե, որ, ևթե, որպեսզի), համադասական շաղկապները միմյանց հետ կապում են համադաս բառեր կամ համադաս խոսքեր (և, ու, այլևս բայց)» (էջ 107)։

Կապակցական բառերը, քանի որ զանազան հարաբերություններ են ցույց տալիս, ուստի, խոսքի մեջ ինքնուրույն մաս չեն կազմում, այլ խնդիրները կապում են նախադասության այլ անդամների հետ։

Ինչ վերաբերում է եղանակավորող բառերին, պետք է նշել, որ Արեղյանն, ի տարբերություն նախորդ քերականների, եղանակավորող բառերը դիտում է որպես առանձին բառատեսակ։ Նրա կարծիքով, «եղանակավորող բառերը՝ թերևս, գուցե, հո, ապաքին, գոնև, գեթ...», որևէ կերպ եղանակավորում են խոսքը՝ դրվելով հաճախ բայերի կամ ուրիշ բառերի վրա» (էջ 107)։

Արեղյանը միաժամանակ նշում է, որ եղանակավորող բառերը, բացասական մասնիկներն ու պատասխանական բառերը քերականների մի մասը համարել են մակրային։ Նա մերժում է այդ տեսակետը, գրելով. «Բայց դրանք իսկական ձևական նշանակություն ունեցող բառեր են, ինչպես և կապակցական բառերը, որոնց բոլորի նշանակությունն ու ֆունկցիան բացատրվում է բառերի ու խոսքերի կապակցության-շարահյուսության մեջ» (էջ 108)։ Այսինքն՝ «խոսքի մասնիկների» խմբում առանձնացված բառերի տեսակներն իրենց նշանակությունն ստանում են շարահյուսական համակարգում։ Հետագայում լեզվաբաններից ոմանք (Պ. Սևակ)<sup>8</sup> եղանակավորող բառերն առանձին խոսքի մաս չհամարեցին։ Իսկ ուրիշները դրանք առանձնացնում են որպես ինքնուրույն խոսքի մաս (Ս. Արրահամյան)<sup>9</sup>։ Նույնիսկ դիտում նախադասության ինքնուրույն անդամ (Վ. Առաքելյան, Մ. Ասատրյան)։ Վերջինիս «Ժամանակակից հայոց լեզու» գրքում կարդում ենք. «Ժամանակակից հայերենի քերականություններում եղանակավորող համարվող բառերի գոնև մի զգալի մասը, օրինակ՝ երևի, գուցե, թերևս, իհարկե, անշուշտ, անպատճառ, անպայման, դժբախտաբար, բարեբախտաբար և այլն, որպես խոսողի դատողական վերաբերմունքի արտահայտություններ, հավասարաժեռ են նյութական իմաստարտադասող մյուս բառախմբերին»<sup>10</sup>։

Ամփոփելով, ուզում ենք մեջբերում կատարել Հ. Բարսեղյանի «Խոսքի մասերի ուսմունքը» աշխատությունից. «Այսպիսով, Մ. Արեղյանի բազմաստիճան ու բազմակողմանի դասակարգմամբ նյութական նշանակության բառերը կամ խոսքի մասերը դառնում են բառաքերականական կարգեր։ Խոսքիմասային նշանակությունն, ուրեմն, բառերի նախադասության մեջ դրսևորած կապակցության քերականական-շարահյուսական իմաստն է, որը զուգորդում է տվյալ խոսքի մասի մեջ մտնող հիմնական կամ միջուկային այն բառային նշանակությունը, որով պայմանավորված է տվյալ խոսքի մասի գործառական կամ շարահյուսական հատկանիշը»<sup>11</sup>։

Հաջորդ խոսքի մասը՝ բայը, Արեղյանը քննում է գոյականից, ածականից, մակրային անշատ՝ շարահյուսության բաժնում։ Իսկ ինչո՞ւ։ Այստեղ Արեղյանը առաջադրում է մի հավակարգ, որին չուրովի մեկնաբանություններ է տալիս։ Նա առաջ է քաշում բայակենտրոն քերականական համակարգ՝ առավելություն տալով բային։ Արեղյանի խորին համոզմամբ բայը խոսքի կենտրոնն է հանդիսանում, իսկ մնացած բառերն առանձնացվում են ըստ բայի և միմյանց հետ ունեցած փոխհարաբերության։

Մենք արդեն նշել ենք նախադասության (խոսքի) արեղյանական ըմբռնումը, որը խիստ տարբերվում է նախորդ քերական Ստ. Պալասանյանի ըմբռնումից։ Վերջինս հայ քերականագիտության մեջ առաջինն էր, որ տվեց նախադասության բնութագրին՝ առանձնացնելով խոսքը նախադասությունից. «Խոսքը մեզ նորա համար է տրուած, որ մեր մտքերը հաղորդենք։ Ուրեմն, ամեն խոսք, բանաւոր լինի, կամ գրաւոր, բաղկանում է մեր ունեցած մտքերից, զանազան առարկաների վրա»<sup>12</sup>։

<sup>8</sup> Տե՛ս Պ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939։

<sup>9</sup> Տե՛ս Մ. Արրահամյան, Չթեքվող խոսքի մասերը... հայերենում, Երևան, 1965։

<sup>10</sup> Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, 1989, էջ 405։

<sup>11</sup> Հ. Բարսեղյան, Նշվ. աշխ., էջ 195։

<sup>12</sup> Ստ. Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի, 1906, էջ 8։

Նա հստակորեն տարբերակում է նախադասությունը խոսքից, գրելով. «Թւրացանչիւր առանձին միտք, որ արտահայտում ենք բառերով, կոչվում է նախադասություն»<sup>13</sup>:

Մինչդեռ Մ. Աբեղյանը «խոսք» և «նախադասություն» հասկացությունները գործածում է նույն նշանակությամբ: Նա ստորոգում է համարում նախադասության հիմնական էությունը, իսկ այն իրականացվում է բայի միջոցով, այն էլ միայն դիմավոր բայի միջոցով:

Բայի մեջ Մ. Աբեղյանը գանազանում է երեք հատկանիշ՝ բայն ունի դեմք, բայիմաստ և ստորոգում է արտահայտում:

1. «Բայի դեմքը ցույց է տալիս այն առարկայի գաղափարը, որին իբրև ենթակայի վերագրվում է մի հատկանիշը» (էջ 294):

2. Բայիմաստը ցույց է տալիս այն հատկանիշը՝ գոյություն, գործողություն կամ գրություն, որ իբրև ստորոգյալ վերագրվում է ենթակային (բայի դեմքին):

3. «Ստորոգումը նրանով է արտահայտվում, որ ամեն բայ ունի բայիմաստ և դեմք՝ միացած մի բառի մեջ» (էջ 295): Այսպես, երբ լսում ենք զնացի բայը, արդեն գիտենք, որ խոսողն իր մասին է հաղորդում, այսինքն՝ իրեն վերագրում է գնալու գործողությունը: Աբեղյանը գտնում է, որ բայի մեջ արդեն ենթակայի և ստորոգյալի գաղափարը կա: Եվ մեկ բայով կարելի է նախադասություն կազմել, բայի քանակից է բխում խոսքերի (նախադասությունների) քանակը: Հանգելով բայակենտրոն քերականական համակարգի գաղափարին, Մ. Աբեղյանը գտնում է, որ բայը խոսքի (նախադասության) կենտրոնն է, իսկ նախադասության անդամները՝ «լրացական բառերը» (գոյականը, ածականը, մակբայը) կամ խոսքի մասերը ստորադասվում են նրան: Բայի լրացումներն են համարում է ենթական, խնդիրը, պարագան: Լրացական բառերը ցույց են տալիս սուարկա (գոյական), հատկանիշ (ածական), հատկանիշի հատկանիշ (մակբայ), որոնք իրենց նշանակություններն ստանում են խոսքի մեջ՝ շարահյուսական համակարգում: Այսինքն՝ այդ բառերի նյութական նշանակությունից է բխում ներանց ունեցած պաշտոնը նախադասության մեջ:

Նախադասության անդամների արեղյանական ըմբռնումն ուսումնասիրության առանձին նյութ կարող է ծառայել:

Ինչպես էլ մոտենանք խոսքի մասերի դասակարգման հարցին, մի բան պարզ է, որ Աբեղյանը մեզ ներկայացնում է բայակենտրոն մի համակարգ, որը մինչև հիմա էլ չի կորցրել իր նշանակությունը: Ե մեծ արժեք է ունեցել հայ քերականագիտության զարգացման գործում:

**А. З. АДИЛХАНИЯН—Абегиановская классификация частей речи.**—В статье обстоятельно анализируется теория частей речи выдающегося армянского, языковеда М. Абегиана. В частности, интерпретируется абегиановское представление понятия «часть речи», значение глагольных структур в системе образования «речи» и вообще в истории армянского языкознания.

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը: